

Ի՞նդ վայր ըզմարդ խուզեն գոռող միտք մարդոյ .  
Ի՞ւանց քոյ կեանք են խօլ ցընողք երազոյ ,  
Ոյր՝ ՚ի կափոյց տակաւ աչացն ՚ի թըմքիր  
Ոչութիւն զընդոստ լանջաց պատէ ծիր :  
Ում չես դու յայտ՝ նոյն եւ զանձնէն է անգէտ ,  
Եւ զոր թողուս՝ ՚ի չիք դառնայ նա ումպէտ .  
Ո՞վ ջահ միակ յաքսորանացս ՚ի մութ վայր ,  
Ուհ դու չէիր , և այլ իսկ զբնէ մեզ մընայր :

### Ռ Ը Պ Ո Ւ Լ

### Մարոնիտք :

Ո՞արոնիտաց ազգին խանձարութքը խաւարամած է . պատմութենէ ալ ուրոշ տեղեկութիւն մը չունինք վրանին , մէյմը որ քիչ ազգային մատենագիր ունին , երկրորդ՝ որ մեր թուականին առաջին գարերը քիչ ծանօթութի կու տան մեզի . ՚ի վերայ այսր ամենայնի աս յայտնի է որ ազգ մը իր ծագմանը վրայ քան զուրիները աւելի տեղեակ է . ուստի աս է իրենց ազգային աւանդութիր : 400ն միջոցները , ինչպէս կը յիշեն (Ո)ւկոդորետոս և Ո. Հովհաննեսկերան , Ո՞արոնն անուամբ սուրբ Ճգնաւոր մը կար , ասոր աշակերտները Ո՞սորւոց այլ և այլ կողմերը տարածուելով բազմաթիւ վանքեր կառուցին , որոնց մէջ նշանաւոր էր եղած Ո՞րամքի մօտ եղածը՝ այն որ ( )ընդի բարեբեր ափանցը վրայ կ'իյնայ : Լոյն կողմի քրիստոնեայք Ո՞իակամեայց աղանդէն անարատ պահուելով այս վանքերուս կողմերը քաշուեցան , և ասով Ո՞արոնիտ անունն առին : Ո՞նչ որ քանի մը ամիս նոյն կողմերը բնակած է , իրենց վրայ ըստ բաւականին սաոյգ տեղեկութիւններ ունեցաւ , որոնց հետ գրեթէ համաձայն կ'ելեն իմ գիտացածներս , որ իրենց ազգային աւանդութիւններէնքաղած եմ : Ո՞արոնիտաց աշխարհական և հաւատոյ գլուխը նոյն է , բայց ( )սմանեան պետութենէն ընկճուած ըլլալովնին ազատութեան սկզբունքը դեռ իրենց մէջ

ծաւալած չէ : 1784ն ըստ Ո՞նչէի հազիւ թէ հարիւր քսան հազար մը կային , այսօրուան օրս երկու հարիւր հազարէն աւելի է և երթալով կ'ածի : Երկրին տարածութիւնը ընդհանրապէս առնելով հարիւր յիսուն քառակուսի փարսախն է , ՚ի բաց թողլով շըրջակայ սահմանները որ գրեթէ նոյնչափ և աւելի ևս են , ուր հետզէետէ նորանոր աւաններ ու գեղեր կը ձեւանանըստ համեմատութեան ժողովրդեան ածմանը :

Ո՞արոնիտք և Տիւրզիք տեսակ մը դաշնակցութեամբ կապուած են որոնց երկուքին մէկ իշխան մը (էֆէ) կը հրամայէ . թէպէտ կրօնիւք և սովորութեամբք շատ կը տարբերին մէկմէկէ ու միշտ բաժնուած կը կենան , ՚ի վերայ այսր ամենայնի մէկ գլխէ կը կառավարուին :

Ի իրանան լերան շրջակայքը կը բնակին Ո՞արոնիտք մերձակայ ձորերու և լերանցամէջից մէջ . այս լեռները բարեբեր են ու մեծ խնամքով մշակուած , որոնց նպաստաւոր են բազմաթիւ գետակներ ու անսպասելի ջրվէժներ . ելած գլխաւոր բերքերն են մետաքս , ձէթ , գարի և ցորեան . լերանց գագաթները գրեթէ անմատչելի են և թանձրակուու ապառաժներ՝ բայց բնակչաց գործունէութիւնը և կրօնասիրութիւնը որ խաղաղ ապաստանարան մը չունի իր կրօնքը պաշտելու , այն անպատուղ երկիրը բարեբեր ու արգաւանդ ըրած է .

սաստիկ ճգամբ ստորերկրեայ ձորերէն հող փոխադրած են վեր ու զուգաչեւ ռական գծով պատերու մէջ ամփոփած՝ մէկտեղ խառնելով քարի փոշին որն որ նոյն կողմերուն բնական հողը կրնայ ըստիլ. ասանկով | իբանան լեռը գեղեցիկ դրախտ մը դարձած է. պտղատու ծառերով լի, և գլխաւորներն են թթենի, թուզ, ծիթենի և կեռաս: Դանապարհորդ մը չկրնար չզարմանալ, երբ օրերով այն դժուարին և ապառաժուտ տեղերէն վեր ելլելէն վերջը, յանկարծ անձուկ լերան կողի մը վրայ և կամ բարձր լերան մը գագաթը գեղեցիկ գեղ մը կառուցուած տեսնայ բոլոր սպիտակ քարերով, հարուստ ու բազմաթիւ ժողովուրդ մը, հեռուեն վանք մը որ նոյն գեղին վրայ կը նայի, միւս կողմէն սրարշաւ վազող ջրվէժ մը որ իր փրփուրներովը գեղին կողերը կը լուանայ, և որ աւելի զարմանալին է պարարտ ու միգաւէտ երկիր մը՝ ուր զանազան սեռի ծառեր գարւոյ և եգիպտացորենի դաշտերու վրայ իրենց ստուերը կը լայնեն: | Կրեթէ քարընկեցէ մը աւելի հեռու չեն նոյն կողմի գեղերը մէկմէկէ, ոմանք դէմ յանդիման, և ոմանք ալ մէկմէկու վրայ նոյն գծով, և ձայնով կրնան մէկ կողմէն միւս կողմբան հասկըցնել. 'ի վերայ այսր ամենայնի հաղորդակցութիւննին շատ դժուար է, պատճառաւ ողորտապտոյտ ճամբաներու, անանկ որ երբեմն ինչուան երկու ժամ կը տեէ միւս կողմը անցնելու համար:

Կրաքանչիւր գեղին մէջ մէյմէկ շէն կը նստի իբրեւ գզիր, և իրեն կ'իյնայ որ և իյէ արդարութիւն և բարեկարգութիւն ընելը: | Կայց աս զանազան գզիրները՝ բոլորն ալ մէկ ընդհանուր գլխէ մը կախումն ունին՝ որ է | Ամիր կամ գաւառապետ ըսուածը: | Ընդարութեատեանը կէս մը այս գաւառապետիս և կէս մ'ալ եպիսկոպոսաց վճռովը կը սահմանուի: | Կեղեցական և աշխարհական իրաւասութեան մէջ գրեթէ միշտ հակաճառութիւնը պակաս չէ: | Մուսնական ինդրոց մէջ | Արոնիտնե-

րու պատրիարգին վերապահեալ է վերջին որոշողական դատը: | Ասկ ուրիշ խընդուց մէջ ալ աշխարհական իշխանութիւնը շատ զգուշութեամբ պէտք է շարժի նկատմամբ պատրիարգին և եպիսկոպոսաց, վասն զի կղերը շատ մեծ ազդեցութիւն ունի ժողովրդեան մոտացը վրայ: | Այս կղերը կը բազկանայնախ պատրիարգէ մը՝ որ եպիսկոպոսաց հաւանութեամբը կ'ընտրուի և հռովմայ Քահանայապետը կը հաստատէ. երկրորդ՝ նոյն Քահանայապետին կողմանէ խրկուած նուիրակէ մը որն որ | Ինդարայ կամ Քահանային վանքը կը նստի. վերջը կու գան եպիսկոպոսունք, վանահարք և ժողովրդապետք: | Եկեղեցին թէպէտ խստիւ արգիլած է | Եւրոպիոյ մէջ քահանայից ամուսնանալը, և շատ աստուածաբանք ալ մեծ բարեկարգութիւն կը սեպեն զայն, բայց հոն պատշաճ սեպան է թոյլ տալու. և բաց 'ի կրօնաւորներէ և եպիսկոպոսներէ աշխարհական քահանայք ամուսնացած են, բայց կրօնական եռանդը և բարեկարգաշտութիւնը ամեննեին պակսած չէ մէջերնին. վասն զի նախկին դարերու այն բնական պարզութիւնը, և կանանց հասարակաց կենակյութէ հրաժարիլը, և հնաւանդ սովորութիւնն ու վարժութիւնը որ և իցէ անպատշաճութեանց և անկարգութեանց մեծ արգելք են. և ինչպէս ստուգուած է հաւաստի փորձերով, որուն դէմ փուճտեղ ոմանք շաղփաղփեցին, | Եւրոպիոյ ամէն կողմէն աւելի | Արոնիտ կղերը յարգ ու պատիւ ունի ժողովրդեան առջեւը ըստ բազում գլխոց, և հին ատենի Ճմարիտ բարեկարգաշտութեան նրկարագիրը կ'ընծայէն թէ իրենց քահանայական պաշտօնին մէջ ունեցած ամենարթուն հսկողութեամբն և թէ բարուց անստգիւտ անարատութեամբը: | Թէ մէկն ուղենայ քրիստոնէութեան նախնի դարերու վրայ ստոյգ գաղափար մ'առնուլ, ջերմեռանդութեան, բարուց պարզութեան, անշահասէր և բարեմիտ ծառայութեան, Ճմարիտ և կամաւոր աղքատութեան, աղնուականու-

թեան 'ի գնացս առանց յոխորտալու, աղօթակրութեան, չսկման և գործունեայ կենաց, պէտք է Ա'արոնիտները տեսնէ:

Ամբողջ Լիբանանու շրջակայքը երկու հարիւր վանքէն աւելի կայ, զանազան կարգօք և կանոնօք: Այս վանքերուս մէջ 20-25 հազարէն աւելի կրօնաւորք կը բնակին. բայց ոչ հարուստ են, ոչ մուրացիկք, և ոչ ալ ժողովուրդը կեղեքօղ. այլ յաշխարհէ հրաժարեալ պարզ և աշխատաւոր մարդիկ են, իրենք զիրենք աղօթքի և հնազանդութեան տակ ընկճած, և որ և իցէ ընտանեկան հոգ մէկդի թողուցած 'ի ծառայութիւն Ա'ստուծոյնուիրեալ են: Իրենց սովորական անցուցած կեանքը՝ ինչպէս քիչ շատ բացատրեցինք, աշխատաւոր գեղացւոյ մը երեսոյթն ունի. Խաշնարածութեան և շերամի կը զբաղին, երկիր կը հերկեն, կը ցանեն և կը հնձեն. բաց ասկէ՝ ըստ պիտոյից նաև աւելի ստորին ծառայութիւններ ալ ընելու չեն քաշուիր: Խւրաքանչիւր վանք միջին ընդարձակութեամբ երկիր մը ունի և ըստ այնմ իրեն անձինքը կը շատցընէ կամ կը նուազեցընէ՝ որչափ որ երկիրը կարենայ զիրենք կերակրել: Այրկայն ատեն բնակեցայ աս ժողովը. գեանս մէջ և յաճախ այցելութեան ելած եմ այլ և այլ վանքերու. բայց մէկ օր մը չեմ լած որ մէկը գայթակզութիւն մը տուած կամ անկարգութիւն մ'ըրած ըլլայ. ամենևին տըրտունջ կամ տհաճութիւն չունին մէջերնին. խւրաքանչիւր վանք կամաւոր աղքատանոց մի է, ուր ամէն միանձն իրեն հարկաւոր եղածը ընդունելին վերջը աւելորդին հոգ չի տանիր: Առ հասարակ գրեթէ ամէնքն ալ զուարթ էին բարուք, գոհ իրենց վիճակին վրայ և առողջք մարմնով. աշխատութիւնն և գործունեայ կեանքը զիխաւորնապատակնին է: Խպիսկոպոսունք վանքերու վրայ բացարձակ իշխանութիւնին. ամէնքաղաք իրեն առանձին եպիսկոպոսն ունի:

Ա'արոնիտք, որոնց ծագումը յայտնի չէ՝ թէ արգեօք Ա'քաբացւոց կամ Ա'

սորւոց սերունդ են, եկեղեցական կղերին պէս եռանդուն ու ծշմարիտ քրիստոնէի մը առաքինութիւններն ունին, և Ա'քեւելքի մէջ թշուառ բաղդէն հալածուելով այն անապատ կողմերը ապատանած են. կերպարանքնին արաբացւոց գծագրութեանը կը նմանի, բայց ընդհանրապէս մեծդի են, վայելուզք մարմնով, նայուածքնին կտրիչ և վեհանձն, իսկ ծիծաղնին քաղցր ու աշխոյժ, կապուտացուի, արծուունկն, իսարտիշահեր. շարժմունքնին ծանրու վսեմ, հագագային ու թանձր ձայն մը, քաղաքավալք առանց նուաստութեան, զգեստնին արևելեան ճոխութիւն մը ունի և վրանին կրած զէնքերնին ամենափայտն: Ա'թէ քաղքի մը մէջէն անցնելու ըլլայ մէկը և տեսնէ որ քաղաքավետը իր պալատին դրանը դիմաց բազմած՝ որուն չորս բոլորը քաղքին մեծամեծները իրենց փառաւոր հագուստներով զինքը մէջ կ'առնեն, ամէնքը միաձև մետաքսեայ կարմիր գոտիներ պլած մէջքերնին, որոնց վրայ արծըթէ կոթերով աշտէներ փայլ կ'արձրկեն, գլուխնին ճոխ փակեզն մը ողորած զանազն գոյներով, ուսերնին չուխայէ լայն վերարկու մը ձգած, կարծես թէ արքունական և կամ թագաւորավայելմարդիկ են: Խւրոպացիները եղթօր պէս կը սիրեն, կրօնքով միացած ըլլանուն համար՝ որ քան զամէն կապ աւելի զօրաւոր է. միւս կողմանէ վստահ են որ մեր գեսպաններն ու հիւպատները ( ) ամանեան Բարձրագոյն դրան դիմաց զիրենք կը պաշտպանեն: Ա երջի աստիճանի հիւրընկալութք ու սիրով կ'ընդունին Խւրոպայի կողմերէն եկած ճանապարհորդներն ու քարոզիչները որ իրենց համար ցանկալիքան մըն է. պանդուխուները կամ քաղաքավետին քով և կամ վանքի մը մէջ կը բնակեցընեն, առատապէս իրենց ամեն պիտոյքը հոգալով. երբեմն ալ բազէ որսալու կը հրաւիրեն զիրենք, և վստահութեամբ ինչուան իրենց ընտանեկան կենակոպութեան մէջ ալ կը մոցընեն. միշտ պատուով ու յարգութք կը իսօսին հետերնին, և այնպի

սի սէր մը կը ձգեն նոյն անձանց վրայ որ  
անքակտելի ու անմոռաց է. և փորձուած  
է շատ անգամ որ հարք և մարք իրենց  
որդւոցը սրտին մէջ նոյն սէրը իբրև ժա-  
ռանգութիւն մը կը թողուն։ Չեմ տա-  
րակուսիր որ եթէ այս ժողովուրդս ա-  
ւելի ծանուցեալ ըլլար, և բազմութիւն  
չանապարհորդաց այն կողմերը յաճա-  
խին, անտարակոյս խել մը եւրոպացիք  
Արոնիտներու քով կը գաղթէին։ Եւ  
յիրաւի շատ փափագելի ու գեղեցիկ  
յատկութիւններով Ճոխացած է այս  
զաւառս. գեղեցիկութի վայրաց, սքան-  
չելի ու կենդանարար կիմսյ, դիւրագին  
արժէք որ և իցէ պարենից, համակրօնք  
ըստ դաւանութեան, հիւրասէր ընդու-  
նելութիւն, ամենայն կողմանէ ապա-  
հովութիւն և հանգստութիւն։ Իսկ  
ըստ ինձ կ'ընտրէի՝ եթէ միայն մարդս  
կրնայ հրաժարիլ բոլորովին իր հայրե-  
նական ափունքներէն ուր Արխախնա-  
մութիւնը սահմանած է իր ծնունդը,  
խանձարուրքն և հաւանականաբար իր  
գերեզմանին անձուկ փոսը, եթէ ակա-  
մայ աքսոր մը ստիպէր զիս հեռանալ  
իմ հայրենիքէս, ըստ ինձ կ'ընտրէի այն  
առաւել Արոնիտներու այն անդոր-  
րաւէտ բնակարանը իջնալ՝ քան թէ որ  
և իցէ ուրիշ ցանկալի տեղ մը. հոն,  
կ'ըսեմ, Ի բանան լերան ստորոտը, այն  
նահապետական ժողովրդեան մէջ, ուր  
կրօնքը, հիւրասիրութիւնը, ծովու և  
ձիւնեղէն լերանց յափշտակիլ տեսքը,  
դրախտանման պարտէզներու տեսքը՝  
ընտրելի են ինձ։ Հոն կայարան մըն է  
անդորրաւէտ հանգստութեան, և բա-  
րուց պարզութեան ճշգրիտ նախագա-  
ղափար. առանց առաջնորդի և միայնակ  
ուր որ կ'ուզես կ'երթաս, թէ ցորեկը-  
լոյ և թէ գիշեր, առանց վախնալու ոչ  
զողէ, ոչ բռնութենէ և ոչ աւազակնե-  
րէ, չարագործութիւնը գրեթէ անձա-  
նոթ է հոն. օտարականը մահմետական  
Արաբացւոյն դիմաց սրբազնն կը սե-  
պոի, աւելի ևս քրիստոնեայ Արաբաց-  
ւոյն, իր գուուր միշտ բաց է հիւրընկա-  
լու. գառն մը ունի՝ կը մորթէ զայն'ի  
չորհս իր քովը ապաստանելոյն. վեր-

ջապէս իր ամէն հանգստութիւնը կը  
թողու օգնելու եռանդեամբ։

Կարաքանչիւր գեղեկեղեցի կամմա-  
տուռ մը ունի ուր ասորի լեզուաւ կ'ըլ-  
լան ամենայն պաշտամունք։ Դէտարա-  
նին ընթերցմունքը քահանայն առ ժո-  
ղովուրդն դարձած կը կարդայ արաբե-  
րէն։ Արօնքը որ քան զմարդկային ազ-  
գը երկար կը տեւէ, իր նուիրական լե-  
զուն աւելի կը պահէ՝ քան թէ ազգը  
իրենցը։

Արոնիտք կտրիչ են և պատերազ-  
մասէր, ինչպէս սովորաբար ամէն լեռն-  
ցի ժողովուրդները. պատերազմի ձայնը  
երբոր հնչուի երեսուն քառասուն հա-  
զար հոգի մէկէն զէնք կ'առնուն, եթէ  
ըլլա իրենց հայրենիքը պաշտպանելու  
և եթէ պատերազմի դաշտն իջնալու,  
և զիսորիս ու զՊամասկոս իրենց քնին  
մէջ կը դողացընեն։ (Սամանցիք չեն հա-  
մարձակիր Ի իրանանու խորերը մոնե-  
լու մինչդեռ ժողովուրդը յինքն յին-  
քեան խաղաղ է։ Պաքեայի և Պամաս-  
կոսի փաշաներն իսկ խիստ քիչ անգամ  
նոյն կողմերը արշաւած են՝ ան ալ մէկ  
կամ մէկալ կողմէն օգնութեան կան-  
չուելով քաղաքական խորվութեց ժա-  
մանակ։ Բատ իմ կարծեացս, որ կարե-  
լի է թէ սխալիմ, Արոնիտ ազգը ապա-  
գայ մեծ ճակատագրի մը սահմանուած  
է. ժողովուրդ մը որ իր նախնի պարզու-  
թիը լաւ պահած է, կրօնքի մէջ անյեղ-  
լի և զօրաւոր ՚ի բնէ. ժողովուրդ մը  
որ իր նահապետական աւանդութիւն-  
ներն ու առաքինութիւններն ունի, շա-  
փաւոր ազատութիւն, հարստութիւն,  
վառ հայրենասիրութիւն, և իր կրօնա-  
կան յարաբերութեանցը պատճառաւ  
քայլ առ քայլ արևմտեան քաղաքա-  
կանութեան կը մերձենայ։ Աինչեւ  
իր շրջակայ ազգերն ու յիշատակա-  
րաններն օրէ օր կ'անհետանան, ինքն  
ընդ հակառակն կարծես թէ նոր կը  
բողբոջի և կենդանի զօրութիւն մը կը  
զգենու։ Պիտի գայ օր մը որ Պատրիք  
քարգաւաճին, ժողովուրդը իր անմա-  
տոյց լեռները թողլով, ծովուն մօտ վա-  
ճառաշահ քաղաքներ պիտի կառուցա-

նէ, Ճարտար ու անխոնջ մշակութեամբ  
երկիրը պտղաբեր այգի մը փոխարկէ .  
և որ աւելի մեծն է՝ նախնի անշքացեալ  
փառքը պիտի զարթուցանէ նոր իշխա-  
նութիւն մը ձևանալով : . . . և այլն  
և այլն :

### ԼԱՄԱՐԴԻՆ

Ճանապարհորդութիւն յԱրևելս :

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՊՕԼՍՈՅ

ՍԿԻՖԻՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ



### ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

**Ե**րկրագնտիս վրայ քանի մը տեղեր  
կան, որոնք իրենց բնական յատկու-  
թիւններովն բազմաթիւ ազգաց բնա-  
կութեանը կեղրոն, և մեծազօր իշխա-  
նութեց մայրաքաղաք եղած են : Տե-  
ղոյն կլիման առողջ և բարեխառն, ու  
երկիրը արգասաւոր ըլլալով, և ընդար-  
ձակ ու ապահով նաւահանգիստ ու-  
նենալով, որպէս զի հեռաւոր աշխարհ-  
ներէ եկած նաւերը կարենան հոն պա-  
տրսպարուիլ :

**Ճ**անապարհորդ մը որ առջի անգա-  
մուն լլ ոսփորի նեղուցը տեսնէ՝ հան-  
դերձ իր ամփիթէատրոնի ձևով գեղե-  
րովը, մզկիթներովը, բարձրածայր աշ-  
տարակներովը՝ որոնց պատերը արաբական  
նկարներով զարդարուած են, իսկ տա-  
նիքը ոսկով ու պայծառութեամբ կը  
փալիլին, ան պալատները՝ որ սուլդան-  
ներու ու անոնց ընտանեացը արքունա-  
շէն բնակութիւններ եղած են . այս գե-  
րազանց տեսարանիս վրայ զարմացած  
կը մնայ և ուրախութեամբ մը սիրտը կը  
լցուի : Լուսին առջեւը կը տեսնէ ա-  
րևելեան փառաւորութիւններն որ նախ-

կին քաղաքականութեան խանձարուր-  
քը եղած են : Երկու կողմն ալ մար-  
դարտազարդ գօտւոյ մը պէս բոլորած  
կը տեսնէ զլուտամալոլ, զքաղաքն ( ) ս-  
մանեան, զլուտամանուազօլիս, որ լու-  
րելեան կայսերութեան Շաբելոնն ու  
լոթէնքը եղաւ :

Լուտանդնուազօլոյ անունը միայն՝  
քրիստոնէութեան նախկին դարերէն  
սկսեալ՝ ամբողջ արևելեան պատմու-  
թիւնը կը բովանդակէ, զորն որ յաջոր-  
դաբար երեսուն կայսերք իբրև անգին  
գանձ մը պահէցին, և զարձեալ ա-  
րևմտեան խաչակրաց առաջինն հանգըս-  
տեան տեղն եղաւ . վերջապէս Լուտան-  
դիանոսի անարժան յաջորդաց ձեռ-  
քէն լլ է մմէտ երկրորդին ձեռքն ան-  
ցաւ :

Լուչպիսի փառաւոր յիշատակներ,  
զարմանալի դէպքեր, փառաց և թշուա-  
ռութեց տեսարաններ չի ներկայացըներ  
մեզի այս քաղքիս պատմութիւն, որ ըստ  
բազի՝ աշխարհիս մէկ խորշը զետե-  
ղուած, բայց իր ազդեցութիւնը հնուց  
՚ի վեր՝ ոչ միայն Լուրոպիս՝ այլ և բո-  
լոր աշխարհիս վրայ ձգած է :

Դարձեալ խել մը բազմաթիւ դա-  
րերէ ՚ի վեր մինչեւ այսօրուան օրս ըստ  
քաղաքական նկատմանց ամենակարեւոր  
կեղրոն մը սեպուած է Լուտանդնուազօ-  
լիս, և աշխարհիս հաւասարակուու-  
թեանը միակ պատճառ : Լոյս կարեսը  
համարուած հաւասարակուութեանս  
համար չէր որ քիչ տարի առաջ տակն՝  
ուվրայ եղաւ Լուրոպիս խաղաղութիւնը  
և բոլոր տէրութիւններ իրենց ուշադրու-  
թիւնը հոն գրաւեցին : Լուսելքն ա-  
րևմտից հետ միացընող կէան ըլլալով  
Լուտանդնուազօլիս, թէ արևելքն և թէ  
արևմտից աչքերն իրեն վրայ կը քաշէ :

Լոյսպիսի բազմահոյլ դէպքերով Ճո-  
խացած քաղքիս պատմութիւն յուսանք  
որ մեր բարեսէր ընթերցողաց հաճոյ  
կ'անցնի, որոնցմէ շատը իրենց խանձա-  
րութիւններուն անոր պարիսսաներուն մէջ գրուած  
կը գտնան, և անտարակսյս կ'ուզեն գիտ-  
նալ թէ ինչե՞ր անցած է ան քաղքին  
մէջ՝ ուր հիմա իրենք կը բնակին :